Կազմված է 02.06.2017 թ. և բաղկացած է 13 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ»

խորհրդատվական հասարակական
կազմակերպության
արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ

02 հունիսի 2017թ.

Կազմակերպության Գործադիր տնօրեն՝

________________ Տ. Ս. Քերոբյան

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ

Գրանցման ամսաթիվ «03» 04. 2014թ.
Գրանցման համար 211.171.807639
Վկայական 03Ա957639
ՀՎՀՀ 01261445

«03» 04. 2014թ. գրանցված կանոնադրության
թիվ 001-3 փոփոխությունը գրանցված է
ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից «11» 12. 2015թ.

«03» 04. 2014թ. գրանցված կանոնադրության
թիվ 001-2 փոփոխությունը գրանցված է
ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
«14» հունիսի 2017թ.

____

«ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ»

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ – 2017

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» խորհրդատվական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ոչ կրոնական հոգևոր, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող, ոչ առևտրային կազմակերպություն է:

1.2. Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ չի զբաղվում:

1.3. Կազմակերպությունը քաղաքական նպատակներ չի հետապնդում, որևէ քաղաքական կուսակցության չի հարում:

1.4. Կազմակերպությունը գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամների շահերի ընդհանրությունը, անդամության կամավորությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

1.5. Կազմակերպության գործունեությունը համապատասխանում է ՀՀ Սահմանդրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, ՀՀ կողմից վավերացրած միջազգային պայմանագրերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը:

1.6. Կազմակերպությունը գործում է ՀՀ ողջ տարածքում և այլ պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան:

1.7. Կազմակերպությունը ունի խորհրդանիշ, որի վրա պատկերված է կապույտ շրջանի մեջ սպիտակ գույնով նկարված մարդու մարմնի և գլխի սիլուետ, որը միաժամանակ նման է լատիներեն «i» տառին: Սա խորհրդանշում է իրազեկված մարդու:

1.8. Կազմակերպության ամբողջական անվանումն է՝
հայերեն՝ «ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» խորհրդատվական հասարակական կազմակերպություն (կրճատ՝ ԻՔՄ ՀԿ),
ռուսերեն՝ Консультативная Общественная Организация “СОЮЗ ИНФОРМИРОВАННЫХ ГРАЖДАН” (կրճատ՝ ОО СИГ),
անգլերեն՝ Consulting Non-Governmental Organization “UNION of INFORMED CITIZENS” (կրճատ՝ UIC NGO):

1.9. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, 0038, Աբելյան փող., շ. 6/1, սենյակ Ա 316:

1.10. Կազմակերպությունը կարող է ունենալ կնիք, անկյունադրոշմ, հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում՝ ինչպես հայկական դրամով, այնպես էլ արտարժույթով:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կազմակերպության նպատակներն ու խնդիրներն են օրենքով սահմանված կարգով՝

- Հանրության իրազեկումը քաղաքական գործընթացների շուրջ,

- Լրատվական գործունեության իրականացումը,
- Գիտական և կրթական ծրագրերի իրականացումը,
- Ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցերը,
- Քաղաքացիական նախաձեռնությունների աջակցումը,
- Հանրային մարմինների հետ քաղաքացիական երկխոսությունների մեխանիզմների ձևավորումը և կատարելագործումը,
- ՀՀ օրենսդրության կատարելագործման նպաստումը,
- Վարորդների և սպառողների իրավունքների պաշտպանությունը,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործառույթների իրագործումը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության կողմից կազմակերպության պետական գրանցման պահից:

3.2 Կազմակերպությունը ունի իրավաբանական անձի համար օրենքով սահմանված բոլոր իրավունքները և պարտականությունները: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքով:

3.3. Կազմակերպությունն իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պատասխանատվություն, դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

3.4. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

3.5. Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրագործելու և խնդիրները լուծելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

ա) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,

բ) կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ,

գ) ներկայացնել և պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերը դատարանում, այլ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

դ) համագործակցել այլ կազմակերպությունների հետ (այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա), ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով, այլ կազմակերպությունների հետ ստեղծել օրենքով չարգելված միություններ կամ անդամակցել դրանց՝ պահպանելով իր գործունեության սկզբունքները,

ե) հիմնադրել զանգվածային լրատվության միջոցներ,

զ) ձեռք բերել, ստանալ, վարձակալել, վարձակալության տալ անշարժ գույք, հիմնական միջոցներ, տրանսպորտային միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք,

է) կնքել համաձայնագրեր այլ կազմակերպությունների հետ, իր անդամներին գործուղել արտերկիր, այլ երկրներից հրավիրել քաղաքացիներ, այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան,

ը) իրականացնել դիտորդական և օրենքով թույլատրված տեղեկությունների ստացման այլ գործառույթներ,

թ) ստեղծել այլ (այդ թվում՝ առևտրային) կազմակերպություններ կամ դառնալ դրանց մասնակից,

ժ) իրականացնել գիտահետազոտական ուսումնասիրություններ, փնտրել և ստանալ տեղեկություններ,

ի) իրականացնել քննարկումներ, լսումներ, հանդիպումներ, բանավեճեր և սեմինարներ,

3.6. Կազմակերպությունն իրավունք ունի իրականացնել կանոնադրությամբ նախատեսված և օրենքով չարգելված այլ գործունեություն:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպությունը պարտավոր է՝

ա) կազմակերպության անդամի պահանջով՝ ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, այլ հինադիր փաստաթղթերին, ժողովի որոշումներին և այլ ակտերին: Դիմողի խնդրանքով, նշված բոլոր նյութերի պատճենները պետք է տրամադրվեն էլեկտրոնային կամ թղթային ձևաչափով,

բ) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում, իսկ օրենքով սահմանված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի,

գ) վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,

դ) իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության Գործադիր մարմնի հաստատմանը ոչ պակաս, քան 2 տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը,

ե) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին, որի պատճառաբանված պահանջով, ողջամիտ ժամկետում վերջինիս տրամադրել հայցված տեղեկություններ,

զ) առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ օրենքով սահմանված կարգով դիմել պետական

գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար: Նույն մարմնին դիմել նաև կանոնադրության փոփոխությունները և նոր խմբագրությամբ կանոնադրությունները գրանցելու համար,

զ) առանց լիազորագրի Կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, օրենքով սահմանված ժամկետում պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի նոր հասցեի մասին տեղեկությունները,

է) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ ցանկացած քաղաքացի, որն ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը և իր գործունեությամբ նպաստում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրագործմանը:

Տասնչորս տարին չլրացած անձինք չեն կարող անդամագրվել կազմակերպությանը:

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

Կազմակերպության անդամը կարող է ցանկացած պահի դադարեցնել իր անդամակցությունը՝ խորհրդին ներկայացնելով համապատասխան դիմում:

5.2. Կազմակերպության անդամ դառնալ ցանկացող անձինք Կազմակերպության խորհրդին ներկայացնում են գրավոր դիմում:

5.3. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը քննարկում և լուծում է Կազմակերպության խորհուրդը:

5.4. Կազմակերպության կանոնադրությունը, կարգապահական կանոնները խախտող անդամի նկատմամբ Կազմակերպության խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ ընդհուպ մինչև Կազմակերպությունից հեռացնելը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Կազմակերպության անդամները վճարում են անդամավճար, որի չափը և վճարման կարգը սահմանվում է խորհրդի կողմից:

6.2. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

ա) ընտրել և ընտրվել Կազմակերպության գործադիր տնօրեն, ծրագրերի համակարգող կամ խորհրդի անդամ,

բ) ծանոթանալ կազմակերպության մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, անվճար ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,

գ) Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա մարմիններին ներկայացնել դիմումներ, բողոքներ և առաջարկություններ,

դ) վերադասության կամ դատական կարգով բողոքարկել կազմակերպության մարմինների որոշումները,

ե) սպառիչ ինֆորմացիա ստանալ Կազմակերպության գործունեության մասին,

զ) ներկա լինելու Ժողովին անձամբ կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին,

է) կազմակերպության գործադիր տնօրենի որոշմամբ անվճար օգտվելու կազմակերպության ծառայություններից:

ը) Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,

6.3. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա) աջակցել Կազմակերպության բնականոն և արդյունավետ գործունեությանը, հոգ տանել նրա հեղինակության բարձրացման մասին,

բ) կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,

գ) բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները,

դ) վճարել սույն կանոնադրության սահմանված կարգով սահմանված անդամավճարը:

6.4. Կազմակերպության անչափահաս անդամների իրավունքների և պարտականությունների առանձնահատկություններ սույն կանոնադրությամբ չեն նախատեսվում: Կազմակերպության անչափահաս անդամներն օգտվում են Կազմակերպության անդամների համար սույն կանոնադրությամբ նախատեսված բոլոր իրավունքներից, բացառությամբ կառավարման մարմիններում ընտրվելու իրավունքի, և կրում են բոլոր պարտականությունները:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

7.1. Կազմակերպության ղեկավար մարմիններն են ընդհանուր ժողովը, խորհուրդը գործադիր տնօրենը և ծրագրերի համակարգողը: Կազմակերպության գործադիր մարմինը Գործադիր տնօրենն է: Կազմակերպությունն առանց լիազորագրի ներկայացնող այլ պաշտոնատար անձը ծրագրերի համակարգողն է:

7.2. Կազմակերպության ղեկավար մարմինների անդամ կարող են դառնալ 18 տարին լրացած կազմակերպության անդամները:

7.3. Կազմակերպության բարձրագույն մարմինը նրա անդամների ընդհանուր ժողովն է, որը գումարվում է երկու տարին մեկ անգամ:

Ընդհանուր ժողովի նիստերը հրավիրում և վարում է կազմակերպության Գործադիր տնօրենը կամ վերջինիս հանձնարարությամբ կազմակերպության խորհրդի նախագահը կամ ծրագրերի համակարգողը:

Հերթական կամ արտահերթ ժողով գումարվում է դրա մասնակիցներին համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

Կազմակերպության ժողովի օրակարգի, նրա աշխատանքը սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով կամ ծանուցման ստացման հավաստիությունը ապահովող հեռահաղորդակցության միջոցով՝ ոչ ուշ, քան ժողովի անցկացման օրվանից 7 օր առաջ:

7.4. Կազմակերպության անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի կամ խորհրդի նախաձեռնությամբ, նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում, հրավիրվում և տեղի է ունենում կազմակերպության արտահերթ ընդհանուր ժողով, որի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն հերթական ժողովի հրավիրման համար նախատեսված եղանակով՝ ոչ ուշ, քան այդ ժողովի անցկացման օրվանից 5 օր առաջ:

7.5. Կազմակերպության ընդհանուր ժողովն իրավազոր է նրանում քննարկվող հարցերի կապակցությամբ որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

Կազմակերպության կանոնադրության, նրանում փոփոխություններ կատարելու, Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին Կազմակերպության ընդհանուր ժողովի որոշումները համարվում են ընդունված, եթե կողմ է քվեարկել Կազմակերպության անդամների ընդհանուր թվի 2/3-ը: Մյուս բոլոր հարցերի վերաբերյալ Կազմակերպության ընդհանուր ժողովի որոշումները համարվում են ընդունված նիստին մասնակցող կազմակերպության անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Եթե ժողովում քննարկվում է ժողովի որևէ մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա ժողովի տվյալ մասնակիցը քվեարկությանը չի մասնակցում:

Կազմակերպության ընդհանուր ժողովի արձանագրման փաստաթղթերը պահպանվում են ոչ պակաս, քան 5 (հինգ) տարի:

7.6. Կազմակերպության ընդհանուր ժողովի իրավասություններն են՝

- Կազմակերպության կանոնադրության հաստատումը, նրանում փոփոխությունների և լրացումների կատարումը կամ նոր կանոնադրության հաստատումը,
- առնվազն երկու տարին մեկ հաստատելու գործադիր մարմնի կողմից ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները
- Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումների ընդունումը (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի),
- Կազմակերպության խորհրդի անդամների ընտրությունը,
- Կազմակերպության գործադիր տնօրենի և ծրագրերի համակարգողի ընտրությունը,
- Խորհրդի անդամի՝ կազամկերպության անդամությունից դուրս գալու կամ հեռացվելու դեպքում լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և խորհրդի նոր անդամի ընտրությունը,
- դադարեցնելու Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,
- ստեղծելու այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին,
- հաստատելու Կազմակերպության կառուցվածքը,
- Կազմակերպության խորհրդի առաջարկով գործադիր տնօրենի և ծրագրերի համակարգողի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը, եթե «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,
- իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

7.7. Կազմակերպության խորհուրդը բաղկացած է 5 անդամից, որոնք ընտրվում են կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից՝ 2 տարի ժամկետով:

7.8. Խորհուրդը հաշվետու է ընդհանուր ժողովին:

7.9. Խորհրդի նիստ հրավիրում և վարում է խորհդրի նախագահը՝ տարեկան առնվազն մեկ անգամ:

Խորհուրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել խորհրդի անդամների մեծամասնության, խորհրդի նախագահի, գորադիր տնօրենի կամ ծրագրերի համակարգողի նախաձեռնությամբ: Այն անձը կամ անձինք ում պատկանում է խորհրդի

ստ հրավիրելու նախաձեռնությունը՝ զբաղվում է նիստի հրավիրման ազմակերպչական հարցերով և սահմանում նիստի օրակարգը:

7.10. Խորհրդի նիստի օրակարգի, նրա աշխատանքը սկսվելու տեղի, օրվա ու ժամի սին նիստի մասնակիցները պետք է պատշաճ կերպով նախապես ծանուցվեն: Խորհրդի ստերը վարում է խորհրդի նախագահը կամ նրա բանավոր կամ գրավոր նձնարարությամբ՝ խորհրդի ցանկացած այլ անդամ:

7.11. Խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից, խորհրդի անդամների ազմից՝ 2 տարի ժամկետով: Խորհրդի իրավասություններն են՝

- խորհրդի աշխատանքների կազմակերպումը,
- խորհրդի անդամներին խորհրդի անունով ստացված դիմումների ներկայացումը,
- կանոնադրությամբ նախատեսված դեպքերում խորհրդակցում կազմակերպության գործադիր տնօրենի հետ:

7.12. Խորհրդի նիստն արձանագրում է խորհրդի նախագահի կողմից ընտրված ստի քարտուղարը, որը խորհրդի անդամ է:

7.13. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների դհանուր թվի կեսից ավելին:

7.14. Խորհրդի որոշումները համարվում են ընդունված, եթե դրանց կողմ է քվեարկել րհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

7.15. Խորհրդի իրավասություններն են՝

- խորհրդի նախագահի ընտրությունը,
- խորհրդի նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցումը,
- գործադիր տնօրենի և ծրագրերի համակարգողի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման առաջարկ ներկայացնել ընդհանուր ժողովին,
- խորիդի նախագահի, գործադիր տնօրենի և ծրագրերի համակարգողի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,
- առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման, դրանց կանոնադրությունների հաստատման և հաշվառումից հանելու մասին որոշումների ընդունումը,
- հաստատում է Կազմակերպության ռազմավարությունը,
- իրականացնում է Կազմակերպության ընդհանուր, կանոնադրական և ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը,
- սահմանում է անդամավճարների չափն ու վճարման կարգը,
- Կազմակերպության անդամների ընդունումն ու հեռացումը,
- գործադիր տնօրենին և ծրագրերի համակարգողին ներկայացնել պահանջ կատարված աշխատանքների, գործարքների, կազմակերպության ծրագրերի ընթացքի, կազմակերպության ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու վերաբերյալ,

7.16. Կազմակերպության խորհրդի նիստի արձանագրման փաստաթղթերը պահպանվում են ոչ պակաս, քան 5 (հինգ) տարի:

7.17. Կազմակերպության գործադիր տնօրենը ընտրվում է ընհանուր ժողովի կողմից մից 2 տարի ժամկետով և հաշվետու է խորհրդին և ընհանուր ժողովին:

7.18. Կազմակերպության Գործադիր մարմինը՝ գործադիր տնօրենը

- առանց լիազորագրի ներկայացնում է Կազմակերպությունը,
- իրականացնում է կազմակերպության գործադիր ղեկավարումը, ապահովում է Ժողովի կամ Կազմակերպության խորհրդի որոշումների կատարումը,
- խորհրդակցելով ծրագրերի համակարգողի հետ՝ տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից
- Կազմակերպություն անունից կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- տալիս է լիազորագրեր,
- խորհրդակցելով խորհրդի նախագահի հետ՝ բանկերում բացում և փակում է Կազմակերպության հաշվարկային և այլ հաշիվներ,
- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- խորհրդակցելով ծրագրերի համակարգողի և խորհրդի նախագահի հետ՝ հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,
- խորհրդակցելով ծրագրերի համակարգողի հետ՝ իրավասու է ընդունել ցանկացած տեսակի և չափի գույք և ֆինանսական միջոցներ ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, կառավարելու, այդ թվում՝ օտարելու, և դուրս գրելու վերաբերյալ որոշումներ,
- խորհրդակցելով ծրագրերի համակարգողի հետ՝ հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,
- հետևում է Կազմակերպության անդամավճարների գանձման գործընթացին և այդ մասին պարբերաբար հայտնում խորհրդի նախագահին,
- կանոնադրությամբ նախատեսված դեպքերում խորհրդակցում կազմակերպության ծրագրերի համակարգողի հետ,
- Ընդհանուր ժողովների գումարմանը նախորդող տարիների ընթացում հաստատում է Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք առնվազն երկու տարին մեկ անգամ ներկայացնում է Ընդհանուր ժողովի հաստատմանը,
- իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

7.19. Գործադիր տնօրենի կողմից իր պարտականությունների չկատարման կամ անբարեխիղճ կատարման, ինչպես նաև Կազմակերպության ներքին կարգապահական

անոնները խախտելու դեպքում խորհրդի առաջարկով նրա լիազորությունները կարող են դադարեցվել ընդհանուր ժողովի կողմից:

7.20. Կազմակերպության ծրագրերի համակարգողն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ 2 տարի ժամկետով և հաշվետու է խորհրդին, գործադիր տնօրենին և ընհանուր ժողովին:

7.21 Կազմակերպության ծրագրերի համակարգողը՝

- առանց լիազորագրի ներկայացնում է Կազմակերպությունը,
- ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
- մշակում է կազմակերպության հիմնական միջոցառումների պլանները, ծրագրերը, հսկում դրանց կատարման ընթացքը,
- համակարգում է հետազոտական աշխատանքների իրականացումը,
- խորհրդակցելով գործադիր տնօրենի հետ՝ հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,
- կանոնադրությամբ նախատեսված դեպքերում խորհրդակցում է կազմակերպության գործադիր տնօրենի հետ:

7.22. Ծրագրերի համակարգողը գործադիր տնօրենի բացակայության ժամանակ ամ վերջինիս կողմից իր պարտականությունների իրականացման անհնարինության, ինչպես նաև նրա լիազորությունների դադարեցման դեպքերում՝ փոխարինում է գործադիր նօրենին և իրականացնում վերջինիս վերապահված բոլոր իրավունքներն ու արտականությունները:

7.23. Ծրագրերի համակարգողի կողմից իր պարտականությունների չկատարման ամ անբարեխիղճ կատարման, ինչպես նաև կազմակերպության ներքին արգապահական կանոնները խախտելու դեպքում խորհրդի առաջարկով նրա ազորությունները կարող են դադարեցվել ընդհանուր ժողովի կողմից:

7.24. Կազմակերպության գործադիր տնօրենի, խորհրդի նապագահի կամ ծրագրերի ամակարգողի լիազորությունների վաղաժամ դադարեցման հարցով խորհրդի նիստը ետք է հրավիրվի այնպես, որ ստեղծվի լիազորությունները վաղաժամ դադարեցվողի՝ իստին մասնակցելու առավելագույն հնարավորություն:

7.25. Կազմակերպության գործադիր տնօրենը, ծրագրերի համակարգողն ու որհրդի նախագահը կարող են անարգել ծանոթանալ կազմակերպության բոլոր աստաթղթերին, նյութերին, իրականացվող աշխատանքներին, ինչպես նաև բանկերից տացված հաշիվներին ու քաղվածքներին:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Կազմակերպության գործունեության վերահսկողությունն իրականցնում է ազմակերպության խորհուրդը:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել Կազմակերպության անդամների անդամավճարները, պետական բյուջեից ստացված մուտքերը, դրամաշնորհները, ֆիզիկական և իրավաբանական անձանց (այդ թվում արտասահմանյան) նվիրատվությունները, հանգանակությունները, իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպություններից ստացված միջոցները, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:

9.2. Կազմակերպության հիմնադիրների և անդամների՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը Կազմակերպության սեփականությունն է:

Կազմակերպությունն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

Կազմակերպության հիմնադիրներն ու անդամները կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ՝ անդամավճարները) նկատմամբ իրավունքներ չունեն:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) կատարվում է Կազմակերպության ընդհանուր ժողովի որոշմամբ:

10.2. Կազմակերպությունը կարող է լուծարվել Կազմակերպության ընդհանուր ժողովի կամ դատարանի որոշմամբ:

10.3. Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպությունը պարտավոր է օրենքով սահմանված ժամկետում այդ մասին տեղեկացնել պետական լիազոր մարմնին:

10.4. Պարտատերերի պահանջները օրենքով սահմանված կարգով բավարարելուց հետո Կազմակերության մնացած միջոցները օգտագործվում են իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման և խնդիրների լուծման համար, իսկ եթե հնարավոր չէ, փոխանցվում է պետական բյուջե: